

— ինչպէս երեւում է, վիճակուած է եւ մեղ
հետաքրքրող փեւնէ՛ «բողոքովին հեղինարան»
(Բ-էր. Հ-յէ.) հայ թարգմանութեան:

4/16 Փետրուարի 1895թ. Մոսկոնա:

Գ.Ր. ԽԱՆՍԹԵԱՆ:



**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲՃ. ՉՄԱՒՈՆԵԱՆԻ ՎՐԱՅ
ՆՈՐԱԳՈՅՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

Գեր. Տրդատ Ժ. Վ. Պաշտան մեզի կը ծանու-
ցանէ նամակաւ, որ ինքն առնի 1790ին ի Մադրաս
տպրած «Պատմութիւն կայսերն Փոնճիանոսի»,
գիրքը, որուն տպագրութիւնն մինչեւ այսօր ծանօթ
չէր, եւ նոյն գրքին վրայ մանրամասն տեղեկու-
թիւն կու տայ: Այս նամակն թէ հրատարակութեան
եւ թէ մանաւանդ ինչ դասգրութեան հիմնադրի-
Յարութիւն ԲԻ. Ենտաննեանին գործունէութեան
վրայ նորագոյն տեղեկութիւններ թովանդակելու
այստեղ կը հրատարակենք: ԽՄԲ.

Այս մտադիր պիտի ընեմ՝ որ «Գիրք եօթն
խմաստաիրաց» կամ «Գիրք պատմութեան
կայսերն փոնճիանոսի» տպագրուած է նաեւ ի
Մադրաս 1790ին, ի տպարանի Տ. Յարութիւն
ԲՃԻ. Շիրազեցոյ, որմէ մի օրինակ ես ունիմ,
իմ մասնաւոր գրատանս մէջ:

Մադրասայ տպագրութիւնն 382 էջէ կը
բաղկանայ, էջ 1 ճակատ, — էջ 2—335
բուն գիրքն, — էջ 336—378 վիճակ, եւ էջ
379—382 Յիշատակարան:

Ճակատն է՝

«Գիրք || պարտնէան կայսերն || փոնճիանոսի,
եւ կնոջն թագուհւոյ || եւ որդւոյ նորին Գիտ-
կղեւտիանոսի, եւ || եօթանց իմաստաիրաց:

Եւ վերստին տպագրեցեալ ծախիւք եւ
տպիւք Տէր || Յարութիւն Շմաւօն Շիրազեցոյ:
|| Առ ի օգուտ Պատուելի ազգիս Հայոց:

Ի Հայրապետութեան լուսանկար մօրն
մերոյ || Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Ղու-
կասու || Սրբազնասուրբ Վաթուղիկոսի ամենայն
Հայոց:

Ի Յառաջնորդութեան Նոր Զուղայու երկնա
|| նման Աթոռոյն Տեառն Յակօբ արճի Եպիս-
կոսոսի:

Յամի մարդեղութեան բանին 1790

Իսկ ի թուին Հայոց 1239

Մադրաս ՚ի տպարանի նոյն

Տէր Յարութիւն Շմաւօն Շիրազեցոյ:»

Էջ 335, զարդի մը շուրջը տպագրուած
են հեռուեալ տառերն՝ որք ինքնին յայտնի են եւ
բացատրութեան կարօտ չեն:

Ո Հ
Ա Տէր

Շ Յ Շ
Այս տառերն կրկնուած են էջ 367 այսպէս՝

Ո
Հ Ա

Տէր Յ

Շ : Շ

Գրքիս վերջն (էջ 379—382) եղած յի-
շատակարանն է՝

«Ա- Բարեւեր ընկերացոյր. Շնորհիւ աստու-
ծոյ յանկ ելեալ աւարտեցաւ տպուան պատմու-
թեան գրքուկիս այսորիկ որ կօչի եօթն իմաս-
տասէր:

Բայց արդ յերես անկեալ յերկիր մեծաւ
թախանձանօք կողիողեալ ժտեմք ողջոյն բարե-
սէր բարեմիտ եւ աստուածուսուց խոհեմու-
թեամբ զարդարեալ սուրբ հարցոյ, որ որ հան-
դիպեցի սմա, մի սագտեալ մեղադրիցէ. այլ
անբասիրս արասցէ ամենայնում ամենայնիւ.
քանզի զտեառն հօժանդակութիւն մեղ ապաւէն
կալաք որ զմեզ այսքանս մինչեւ ցայսօր հասու-
ցանել կարողս արար: աղաչեմք եւ հայցեմք ի
ձեռն զի մի գննողք եւ որոնողք մերոց պակա-
սութեան գուցէք. քանզի քաջ իսկ գիտեմք
մեք եւս եթէ գոն բազումք որք եթէ կամիցին
կարողք են քան զայս լաւագոյնս հնարել յա-
ղագս պայծառութեան հայկազեան սեռին, որ-
պէս եւ տէր գիտէ ոչ սակաւ ինչ ծախս արա-
րաք թող զմեր այնքան հարախուճ տարժա-
նուան մինչ զի զօրն ողջոյն ոչ բաւական գորով
եւ զգիշերն տիւ արարեալ առ գործսն պարա-
պեցաք քրտընաջան դեգերանօք, այլ անձանձ-
րութ ընկալարուք զդուզնաքեայ զաշխատանս եւ
սիրով ընդունեսցիք:

Արդ ի վաղձանի բանիս յիշեսցիք որպէս
զվաստակաւոր ի տանն Հայոց զՏէր Յարութիւն
Շմաւօն Շիրազեցի, զնախկին սահմանօղն եւ զա-
ռաջնահնար բաղմաշխատ տքնութեամբ առ ձեռ
բերօղն սոյնոյ գեղեցիկ տպարանիս:

Նա եւս յիշեսցիք զբաղմաշխատ ձեռնասուն
աշակերտ եւ հոգեւոր հարազատ որդին իմ
զԽաչիկ Ծատուր նոր Զուղայու թարվիզեցի
Զարիֆեան եւ զճնողն իւր որ ի սկզբանէ գոր-
ծոյս վաստակակից իմ եղել:

Արժան է բարի յիշատակն թողուլ ի
վերայ աշխարհի զպարոն Յակօբ Սիմօն Այու-
բեանց կոչեցեալն որ նախկին յորդորիչ գտաւ
եւ ձրի աշխատէր ի վերայ տպարանիս առ ի
օգուտ ազգին խորհելով: